

обязанности этих классов были закреплены в законодательстве. По сравнению с 60-ыми годами века в 80-ые годы в Эриванской губернии и в Зангезурском, Казахском, Шушийском, Ахалкалакском, Борчалуйском уездах Восточной Армении численность духовенства растет, достигая 15217 человек, что составляла, 1,13% всего населения (1345405 человек). Данные о духовном сословии Карсской области в упомянутом периоде не имеются.

В 90-ые годы, при условиях непрерывного роста численности населения в Восточной Армении, духовенство постепенно количественно уменьшалось, и в 1897 году составляло 13 643 человек, или 0,8% всего, в том числе и Карсская область.

THE RELIGIOUS CLASS ARMENIA AND THE RELIGIOUS AMATEURS OF THE EASTERN IN THE SECOND HALF OF THE XIX CENTURY

G. L. KIRAKOSYAN

In the second half of the 19th century, the population of Eastern Armenia continued to be divided into classes, whose rights and duties were enshrined in legislation, including the religious class. In comparison to the 60s, in 80s the number of religious class in provinces Zangezour, Kazakh, Shushi, Akhalkalaki and Borchaly of Eastern Armenia grew becoming 15,217 people, which was 1.13% of all the population (1.345.405 people). There is no any data about the religious class of the Kars province in the definite period of time.

The religious class of the Eastern Armenia became smaller in 90s, despite the growth of the population and in 1897 it was only 13.643 people (0.8% of all the population) including Kars province.

ԷԹՆԻԿ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԻ ԺԱՄԱՆԱԿ¹ (ԳՅՈՒՂԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԻ ԴԵՊԶԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ)

Ա. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու,
ԳՊՀ պատմության ամբիոնի դասախոս

Խորհրդային Միության վերջին տարիները և հետխորհրդային ժամանակաշրջանը, ի թիվս քաղաքական, սոցիալական, տնտեսական ճգնաժամների, ուղեկցվեցին նաև բազմաթիվ կոնֆլիկտներով, որոնց անբաժան մասն է հանդիսանում «փախստականություն» երևույթը: Կովկասյան ռեգիոնում, կապված բազմաթիվ

¹ Հոդվածը պատրաստվել է գերմանական Հ. Բյուլի անվան հիմնադրամի «Քաղաքացիական նախաձեռնությունը Հարավային Կովկասում հայկական և ադրբեջանական բնակչության տարաբաժանման գործընթացում. Քերքենջ և Ջյունաշող գյուղերի փոխանակման օրինակով» հետազոտական ծրագրի նյութերի հիման վրա:

էքնոքաղաքական կոնֆլիկտների հետ /վրաց-աբխազական, վրաց-օսական, հայ-ադրբեջանական/, այդ երևույթը դրսևորվեց ողջ ժանրությամբ ու պրոբլեմներով հանդերձ: Այն, լինելով կոնֆլիկտների հետևանք, կարևոր տեղ է զբաղեցնում դրանց քաղաքական կարգավորման համատեքստում, միևնույն ժամանակ հակամարտող հասարակությունների ու փախստականության համար այն հարուցեց բազմաթիվ խնդիրներ՝ կապված ձևավորված նոր իրողությունների, սոցիալական, հոգեբանական, մշակութային ադապտացիայի հիմնախնդիրների հետ և այլն:

Համաշխարհային պատմությանը հայտնի են կոնֆլիկտներով թելադրված միգրացիոն այդ հոսքերը կարգավորող միջազգային ու պետական տարբեր մոդելներ (բնակչության տրանսֆերներ, փոխանակումներ և այլն), որոնք պետական կամ միջազգային նախաձեռնություններ են հանդիսացել:²

1988թ. սկիզբ առած Ղարաբաղյան կոնֆլիկտը նույնպես ուղեկցվեց փախստականության հզոր ալիքներով:

Բռնությունների, տեղահանությունների ընդհանուր համապատկերի մեջ ուշագրավ կերպով առանձնանում է Քերքենը և Ղզլ Շաֆազ գյուղերի հավաքական փոխանակման պատմությունը՝ որպես ժողովրդական դիվանագիտության և քաղաքացիական նախաձեռնության արդյունք կոնֆլիկտային իրավիճակում:

Մինչև 1988թ. Ադրբեջանի Շամախու շրջանի Քերքենը գյուղը հայկական էր, ուներ բացառապես հայ բնակչություն: Կոնֆլիկտային իրավիճակով պայմանավորված 1989թ Քերքենջի հայ բնակիչները փոխանակում են իրենց գյուղը Հայկական ԽՍՀ Կալինինոյի շրջանի Ղզլ-Շաֆազ (ներկայումս ՀՀ Լոռու մարզ, գյուղ Չյունաշող) ադրբեջանական գյուղի հետ:

Իրադարձությունները տեղի են ունեցել 1988-1989թ, և թեև ժամանակի ոչ երկարատևությանը, այուամենայնիվ, այս ընթացքը բնութագրվում է մի շարք կարևոր ժամանակային չափումներով, որոնք մինչև այժմ էլ հստակորեն երևակվում են այդ իրադարձությունները վերապրած մարդկանց հիշողության մեջ՝ դառնալով կոլեկտիվ հիշողության անբաժանելի բաղադրիչ: Այդ ժամանակային չափումները իրենց հետ որոշակի տեքստեր են բերում, որոնք բնութագրում են ժամանակի ու իրադարձությունների մասին մարդկանց ընկալումները, դրանց առաջ բերած փոփոխությունները մտածողության ու վարքագծի առումով:

ՍՈՒՄԳԱՅԻԹ. ՏԱԳՆԱՊԻ ՍԿԻԶԲ ԵՎ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԾՆՈՒՆԴ - 1988թ. փետրվարի Սունգայիթի հայկական ջարդերը³ ժամանակի այն սահմանն են, որից և սկսվում է Քերքենը գյուղի հայերի ժամանակակից պատմությունը, այսինքն՝ 1988-89թ. իրադարձությունների շուրջ բանասացների պատմությունները սկսվում են «Սունգայիթով»:⁴

Սունգայիթյան իրադարձությունների նման՝ որպես շրջադարձային կետ ըն-

² Մեր երախտագիտությունն ենք հայտնում Էրազմուս Մունդուս ծրագրին՝ այդ ուղղությամբ Եվրոպայում հետազոտություններ իրականացնելու համար:

³ 1988թ. փետրվարի 27–29 Ադրբեջանի Սունգայիթ քաղաքում տեղի են ունենում հայերի ջարդեր:

⁴ **Ա. Հակոբյան**, Դաշտային հետազոտական նյութեր, գ. Չյունաշող, 2006-2007: Հոդվածը շարադրված է դաշտային այդ նյութերի հիման վրա: Այնուհետև բոլոր դաշտային նյութերը վերաբերում են դրան և հոդվածում առանձին չեն հղվում:

կալոււնը, առհասարակ բնութագրական է ադրբեջանահայությանը:⁵

Քերքենջի հայերի կողմից սոււմգայիթյան իրադարձությունների ընկալման սրությունը պայմանավորված է նաև նրանով, որ այդ ջարդերին զոհ գնացած հայերից մեկը իրենց համագյուղացի Գաբրիել Տրդատյանն էր⁶, որի թաղոււնը տեղի է ունենում հենց գյուղում՝ իրավապահ մարմինների հսկողությամբ:

Սոււմգայիթյան իրադարձությունները Քերքենջի հայերի մոտ առաջ են բերում տագնապներ՝ կապված Ադրբեջանում իրենց ապագայի, անվտանգության ու հետագա կենսագործունեության համար: Հենց այս ժամանակաշրջանում, Սոււմգայիթից անմիջապես հետո, 1988թ. գարնանը համայնքում առաջ են քաշվում իրավիճակից դուրս գալու ծրագրեր. Հայաստան կամ Ռուսաստան հավաքական տեղափոխում, նոր գյուղի հիմնադրում կամ փոխանակում Հայաստանում ադրբեջանական գյուղի հետ:

Այս փուլում, սակայն, դա չի իրականացվում, քանի որ դեռևս գյուղացիների մոտ որոշակի վստահություն կար ԽՍՀՄ նկատմամբ, որպես անվտանգության, օրինականության երաշխավոր, միևնույն ժամանակ գյուղի բնակչության համար դա բավական ծանր որոշում էր: Մարդիկ մտածում էին, թե *«ոնց թողնենք մեր նախնիների, ազգականների գերեզմանները...»*:

Այուսմենայնիվ, Սոււմգայիթը ծնեց տագնապ, որից և սկիզբ առան հավաքական տեղափոխման, Հայաստանում ադրբեջանական գյուղի հետ փոխանակման գաղափարներ և մտորումներ:

ՀԱՍԱՅՆՔԸ ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ. ԻՆՔԱԿԱԶՍԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ - Մի քանի ամիս անց, սակայն, 1988թ. աշնանը Ադրբեջանում իրադրությունը կտրուկ սրվում է: Հայերի նկատմամբ էթնիկ հալածանքները, բռնությունները ծավալվում են ողջ հանրապետությունում, տեղի են ունենում հայերի զանգվածային բռնագաղթեր:

Այդ ժամանակաշրջանում, օրինակ, Ադրբեջանում տիրող իրավիճակի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում իսրայելական «Կրուգ» թերթը, որտեղ «Բաքվի օրագրի» հեղինակը՝ իբրև ականատես, նկարագրում է հանրապետությունում տիրող ու ծավալվող հակահայկական հիստերիան, Սոււմգայիթյան ոճրագործների զանգվածային հերոսացումը, բռնությունները և այլն:⁷

1988թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Քերքենջի հայության համար նույնպես բավական ծանր իրավիճակ է ստեղծվում: Այդ ժամանակաշրջանում հայաթափվում են նաև Շամախու շրջանի հայկական բոլոր գյուղերը, բացառությամբ Մադրասայի և Քերքենջի, ուր ապաստանում է շրջակա հայկական գյուղերից և Շամախի քաղաքից քշված հայկական բնակչությունը, որոնց հետո Ադրբեջանի

⁵ Ա. Հակոբյան, «Ադրբեջանում հայերի նկատմամբ բռնությունները» հետազոտական ծրագրի նյութեր, 2006:

⁶ Սոււմգայիթյան իրադարձությունների զոհերի պաշտոնական ցուցակում, իրոք, նշվում է Գ. Տրդատյանի անունը՝ Գաբրիել Տրդատով ձևով: Տես «Сумганг, гласность, перестройка» Ереван, 1989:

⁷ Теперь я знаю, что чувствовали евреи Германии в 1938 году (Бакинский дневник), "Круг" ("KRUG") еженедельник, Тель-Авив, 23.07,1989. В сб. Нагорный Карабах и вокруг него... глазами независимых наблюдателей, сборник документов, сост. Золян С., Мирзоян Г., Ереван, 1991, стр. 180-183.

իշխանություններն ուղարկում են Հայաստան⁸:

Տազնապի ու իրական վտանգի այս պայմաններում Քերքենջ ու Մադրասա գյուղերը դիմում են ինքնապաշտպանության: Քերքենջի բնակչությանը Հայաստան ուղարկելու, իրականում բռնագաղթեցնելու ադրբեջանական իշխանությունների փորձերը արդյունք չեն տալիս, և Քերքենջի հայերն ընդդիմանում են այդ քայլին՝ որոշելով սեփական ուժերով դիմակայել ստեղծված սուր իրավիճակին:

Ընդդիմությունը իշխանությաններին կարևոր փուլ էր համայնքի ինքնակազմակերպման առումով, և հենց դրանով պայմանավորվեց հետագա զարգացումների տրամաբանությունը: Չլինել այդ հանգամանքը, ապա գյուղերի հետագա փոխանակումը ևս տեղի չէր ունենա, քանի որ այդ ժամանակ արդեն (1988թ. աշնանը, դեկտեմբերին) Ադրբեջանի հայկական ողջ գյուղական բնակչությունը արդեն բռնագաղթեցվել էր:⁹

Հայաստան բռնագաղթեցնելու ադրբեջանական իշխանությունների մտադրությանը, ընդհանուր տազնապին ու վտանգին, որ առկա էր Ադրբեջանում 1988թ. նոյեմբերին, ի պատասխան Քերքենջի հայերը իրենց գոյատևումը ապահովելու համար ոչ միայն դիմում են ինքնապաշտպանության, այլև դրան զուգահեռ սկսում են առաջ քաշել ու իրականացնել իրավիճակից դուրս գալու սեփական ծրագրեր:

Ինքնապաշտպանությունը շարունակվեց նույնիսկ գյուղում ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարության ստորաբաժանումների հայտնվելուց հետո և մնաց մինչև 1989թ. հունիս, երբ գյուղացիները հավաքական տեղափոխվեցին Հայաստան:

Կոնֆլիկտային իրավիճակը վերափոխեց համայնքի կյանքը և առաջ բերեց ինքնակազմակերպման հետաքրքիր մեխանիզմներ ու դրսևորումներ: Քերքենջցիների բնութագրմամբ, արդեն «Սովետը մեռել էր...», «Գորբաչովը չկար...», և իրենք կարծես թե առանձնացված մի կղզյակ լինեին:

Իրավիճակի սրությունը հանգեցնում է միասնականության և կոնսոլիդացիայի բարձր աստիճանի Քերքենջի հայության շրջանում: Սովորաբար այս իրավիճակը ներկայացնելու համար բանասացները նշում են, որ ամեն ինչ որոշում էր ժողովուրդը կամ «մենք» և այս պայմաններում «բոլորը իրար հասկանում էին»: Հոգեբանական այս հենքի վրա առաջ են մղվում անհատներ, որոնք կարևոր ու վճռական դերակատարում են ստանձնում համայնքի կյանքում: Ձևավորվում է իշխանության կամ առաջնորդության-ղեկավարության ինստիտուտը ճգնաժամային պայմաններում:

1988թ. նոյմբեր-դեկտեմբեր ամիսներին Քերքենջ գյուղը ըստ էության չուներ իշխանության պաշտոնական տեղական մարմին: Ինքնակազմակերպման

⁸ Ինչպես նշում են բանասացները, հայկական այս բնակչությանը ադրբեջանական իշխանությունները մեկ գիշերվա մեջ պարզապես ավտորուսներով տեղափոխել էին Քերքենջ և Մադրաս: Բնակիչները թողել էին իրենց ողջ կայքը և գույքը: Դրանք այդպես էլ կորսվում են:

⁹ Ոչ միայն գյուղական բնակչությունը, այլև Ադրբեջանի քաղաքներում՝ Կիրովաբադ (ներկայիս Գյանջա), Շաքի, Շամախի և այլն, բնակվող հայությունը այդ ընթացքում նույնպես բռնագաղթեցվել էր: Բաքվում հայերը շարունակեցին մնալ մինչև 1990թ. հունվար, երբ այդ քաղաքում տեղի ունեցան հայկական ջարդեր:

կարևոր օջախներ հանդիսացան գյուղի թաղերը և հենց թաղական համակարգով էլ կազմակերպվեց ինքնապաշտպանությունը՝ համապատասխան անհատների գլխավորությամբ: Ինքնապաշտպանությունը առաջ բերեց որոշակի որակներ կրող անհատ-ղեկավարներ:

Միևնույն ժամանակ «գյուղի մեծերը» կարևոր դերակատարում են ունենում միջհամայնքային շփումներում, ադրբեջանական համայնքների, իշխանությունների հետ բանակցություններում:

Մինչև այժմ էլ քերթենջցիները նշում են, որ գյուղերի փոխանակությունը կազմակերպեցին «գյուղի մեծերը»: Ընդհանուր առմամբ, այս հանգամանքը տեղավորվում է միջխմբային, միջհամայնքային շփումների, կոնֆլիկտների հաղթահարման կովկասյան տրամաբանության մեջ, երբ համայնքը ներկայացնում էին «մեծերը»:¹⁰ Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ տվյալ պարագայում, թեև ավագության գործոնը կարևոր, սակայն վճռական չէր և առաջ են մղվում «մեծեր», որոնք արդեն իսկ իրենց կենսագրությամբ վաստակել էին համայնք ներկայացնելու, կամ նրա հետ կապված խնդիրների լուծման իրավունքը: Միևնույն ժամանակ հանդես են գալիս համեմատաբար երիտասարդ ղեկավարներ, որոնք կարևոր դերակատարում են ունենում այդ գործընթացներում և ողջ համայնքի կյանքում: Ըստ էության իշխանության-ղեկավարության խնդիրը կոնֆլիկտային իրավիճակում Քերթենջի հայության մոտ ձևավորվեց հին/ավագ և նոր/երիտասարդ առաջնորդներով:

Ընդհանուր առմամբ բոլոր ղեկավարներ -առաջնորդները հասարակ գյուղացիներ էին, որոնց առաջ էր մղել իրավիճակի սրությունը:

Դիտարկելով համայնքի և առաջնորդների կապը՝ պետք է նշել, որ վերջիններս սոսկ ներկայացնում էին համայնքը այդ բանակցություններում, որոշում խնդիրներ համայնքի հետագա կյանքի համար, սակայն նրանք երբևիցե լիազորված չէին որոշելու՝ գյուղը տեղափոխվում է հիշյալ բնակավայր, թե չէ: Այն, ինչպես նշում են մեր բանասացները, որոշում էր «ժողովուրդը»: Այսինքն՝ առաջնորդները միայն բնակավայրերի տարբերակներ էին առաջ քաշում, իսկ որոշումը համայնքինն էր:

Ինքնակազմակերպման մյուս դրսևորումը այն խմբերն էին, որոնք Հայաստանի տարածքում փնտրում էին համապատասխան բնակավայրեր փոխանակության համար:

Ինքնակազմակերպման նման մեխանիզմներն ու դրսևորումները ի վերջո ապահովեցին Քերթենջ գյուղի հայերի գոյատևումը կոնֆլիկտային իրավիճակում, այնուհետև տեղափոխվելը Հայաստան՝ ադրբեջանաբնակ Ղզըլ-Շաֆագ գյուղի հետ փոխանակման միջոցով:

ՓՈՒՆԱՆԱԿՈՒՄ. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ - Ինքնապաշտպանությանը զուգահեռ արդեն 1988թ. ղեկտեմբերին սկսվում են ակտիվ փնտրտուքներ Հայաստանում ադրբեջանական որևիցե գյուղի հետ փոխանակման նպատակով: Սակայն եղած տարբերակներին քերթենջցիները համաձայն չեն լինում:

¹⁰ Ю. Анчавадзе, Миротворческий потенциал институтов традиционно-бытовой культуры, Традиция разрешения конфликтов на Кавказе и методы институтов гражданского общества, Материалы конференции, «Традиция народной дипломатии и нормы поведения во время войны и конфликтов на Кавказе, Цахкалзор, 2001, Кавказский форум неправительственных организаций, стр. 282.

1988թ. վերջերին Հայաստանում նույնպես իրավիճակը սրվում է և նույնբերին ադրբեջանցիների նկատմամբ բռնությունների դրսևորումներ են տեղի ունենում:¹¹

1989թ. փետրվարին, երբ փոխանակման նպատակով Հայաստան փնտրտուքների գնացած քերքենջցիների խումբը վերադառնում է, գյուղի մատույցներում հերթապահող իրավապահներն ու զինվորականները նրանց ասում են, որ նման նպատակով Հայաստանի Ղզլ Շաֆագ ադրբեջանական գյուղից պատվիրակություն է եկել և Շամախիում նրանց են սպասում:

Այդպես տեղի է ունենում երկու գյուղերի ներկայացուցիչների հանդիպումը: Սկսվում են գյուղերի փոխանակման շուրջ բանակցություններ, որոնք մի քանի փուլ են ունենում: Քերքենջցիներին դուր է գալիս Ղզլ Շաֆագ գյուղի դիրքը, պայմանները և երկու համայնքներն էլ որոշում են սկսել գյուղերի փոխանակման գործընթացը:

Այն տեղի է ունենում երկու գյուղերի ներկայացուցիչների միջև ձեռք բերված պայմանավորվածության և բանավոր պայմանագրի համաձայն: Պետք է նկատել, որ ադրբեջանական համայնքը ներկայացնում էին գյուղի պաշտոնական իշխանությունների ներկայացուցիչները և վերջիններիս մոտ լիդերության ինստիտուտը կոնֆլիկտային իրավիճակում ձևավորվել էր հենց նրանց շուրջ:

Փոխանակման պայմանագիրը, որը մի շարք բանավոր պայմանավորվածությունն էր, ներառում էր. տների անհատական փոխանակություններ, համայնքային-պետական սեփականության անվնաս փոխանցում միմյանց, վերջապես կողմերը պայմանավորվում են պահպանել միմյանց գերեզմանոցները և պայմանավորվում են փոխադարձ այցելությունների մասին:

Ինչպես նշում է մեր բանասացներից մեկը, որը փոխանակման կազմակերպիչներից էր և բանակցությունների մասնակից, երբ ամեն ինչ արդեն համաձայնեցված էր, վերջին պահին առաջարկում է նաև պահպանել միմյանց գերեզմանները, և այդ առաջարկը, ըստ նրա, ադրբեջանցիներին դուր է գալիս: «Մենք չգիտեինք, որ այսպես կլինի, մենք մտածում էինք, որ կարող էինք այցելել մեր գերեզմանները...», -նշում է բանասացը:

Ուշագրավ է, որ մինչև վերջին ժամանակներս ադրբեջանցիները կարողանում էին այցելել Հայաստան, Ձյունաշող գյուղը (նախկին Ղզլ-Շաֆագ), իրենց նախկին գերեզմանոցը: Մեր բանասացները քանիցս դիմավորել, ուղեկցել են իրենց ծանոթներին: Դրանք ոչ ֆորմալ այցելություններ են, քաղաքացիական ու ժողովրդական նախաձեռնություններ: Ադրբեջանցիների համար դա դյուրին էր նաև նրանով, որ Ձյունաշող գյուղը գտնվում է հայ-վրացական սահմանին:

Ինչ վերաբերում է Քերքենջի հայերին, ապա վերջիններս, հասկանալի պատճառներով, երբեև է չեն կարողացել այցելել իրենց նախկին բնակավայրը Ադրբեջանում:¹²

1989թ. մայիսից սկսվում է գյուղերի փոխանակման ռեալ գործընթացը և մայիս-հունիս ամիսներին Քերքենջի հայերը տեղափոխվում են Հայկ. ԽՍՀ Կալինի-

¹¹ L. Abrahamian, Typology of Aggressiveness and National Violence in the Former USSR, International Journal on Minority and Group Rights, 1996/97, Vol. 4, N. 3/4, p. 263-278.

¹² Հայերը իրենց գյուղի մասին ունեն միայն 1996թ. նկարահանված մի տեսաերիզ, որը նրանց պատվերով նկարահանել են ադրբեջանցիները:

նոյի շրջանի Ղզըլ-Շաֆազ գյուղը, իսկ մինչև սեպտեմբեր Ղզլ-Շաֆազի ադրբեյջանցիները հեռանում են և հաստատվում Քերքենջում: Փոխանակման գործընթացը տեղի է ունենում արդեն անհատական պայմանավորվածությունների հիման վրա. այսինքն՝ ընտանիքները, որոնք պետք է փոխանակեին միմյանց տները, պայմանավորվում են իրար հետ ժամկետի ու այլ հարցերի հետ կապված: Այդ իսկ պատճառով փոխանակման գործընթացի ժամանակ երկու գյուղերում էլ առժամանակ խառը բնակչություն է լինում, սակայն, որպեսզի կոնֆլիկտային իրավիճակներ չլինեն, երկու կողմերն էլ հետևում են դրան, և այդ խնդիրը նույնպես փոխանակման ընդհանուր պայմանների մեջ է լինում:

Տների փոխանակումը տեղի է ունենում և ձևակերպվում է համաձայն ԽՍՀՄ օրենսդրության և յուրաքանչյուր ընտանիք դա կատարում է: Պետք է նշել, որ տների ընտրության խնդիրը նույնպես անհատապես է կատարվում, յուրաքանչյուր ընտանիք, անհատ ինքն է ընտրում, բանակցում փոխանակման համար:

Հետաքրքրական է, որ Հայաստանում փոխանակման գործընթացը դյուրին է ընթանում և իշխանությունները խոչընդոտներ չեն հարուցում, սակայն Ադրբեյջանում իրավիճակը այլ է լինում, և տեղի իշխանությունները, ինչպես վկայում են քերքենջցիները, ամեն կերպ խոչընդոտում են գործընթացին, ձգձգում: Ինչպես նշեց բանասացներից մեկը, թերևս, դա պատճառաբանվում էր, նրանով, որ իշխանությունները, մտածելով, որ հայերն ամեն դեպքում պետք է հեռանան, այդ կերպ փորձում էին տիրանալ նրանց ունեցվածքին, տներին, իսկ փոխանակումը դրա հնարավորությունը չէր ընձեռում, այդ իսկ պատճառով արհեստականորեն ձգձգում էին:

Ի վերջո, սակայն, այդ խոչընդոտները հաղթահարվում են: Օրինակ, փոխանակման գործընթացը Ադրբեյջանում դյուրացնելու նպատակով Ղզլ Շաֆազի ադրբեյջանցիները օգտագործում են իրենց ոչ ֆորմալ կապերը Ադրբեյջանի Գիտությունների ազգային ակադեմիայում և այդտեղից միջնորդություն է լինում:

Քերքենջ և Ղզլ Շաֆազ գյուղերի փոխանակման պատմությունը ցույց է տալիս, թե կոնֆլիկտային իրավիճակում ինչպես են դրսևորվում, զործառանում հորիզոնական, խմբային կապերն ու մեխանիզմները, որոնք տվյալ պարագայում հանգեցնում են կոնֆլիկտի հաղթահարմանը լոկալ մակարդակում՝ սկսած գյուղերի, տների փոխանակումից մինչև միմյանց գերեզմանոցների պահպանում: Այդ համատեքստում այն հանդիսանում է հորիզոնական, խմբային կապերի ու մեխանիզմների զործառնության արդյունավետ օրինակ:

**ЭТНИЧЕСКОЕ НАСИЛИЕ, СОЖИТЕЛЬСТВО И НАРОДНАЯ ДИПЛОМАТИЯ
В КАРАБАХСКОМ КОНФЛИКТЕ
(ОБ ОДНОЙ ИСТОРИИ ОБМЕНА СЕЛАМИ)**

А. А. АКОПЯН

Последние годы Советского союза и постсоветский период в числе политического, социального, экономического кризиса сопровождался многочисленными конфликтами, которые являются неотъемлемой частью явления „беженства“.

В 1988 году Карабахский конфликт сопровождался мощной волной беженства. На общем фоне насилия и изгнания, интересным образом выделяется история коллективного обмена сел Керкендж

и Кзл Шафа как результат народного дипломатизма и гражданской инициативы в конфликтной ситуации.

**ETHNIC VIOLENCE, COMMUNITY AND PUBLIC DIPLOMACY
DURING THE KARABAKH CONFLICT
(HISTORY OF THE EXCHANGE OF VILLAGES)**

A. A. HAKOBYAN

The last years of the Soviet Union and post-soviet period was accompanied by various conflicts such as political, social, economic crises and the inseparable part of which was the “refugee” phenomenon.

The Karabakh conflict which began in 1988 was also accompanied by the powerful waves of refugees.

The history of the exchange of Qerqenj and Khzl Shafag villages is singled out on the general background of violence, evacuation as a result of public diplomacy and civil enterprise in conflict situations.

ԹԵՐԼԵՐՅԱՆԻ ԶԻՆԱԿԻՑՈՒ

Մ. Ս. ՔԵՇԻՇՅԱՆ

*ԳՊԴ Պատմության քանգարանի ֆոնդապահ,
ԳՊԴ դասախոս*

Հայ Ռատի պատմության մեջ 1921 թվականի մարտի 15-ը հիշատակվեց. այդ օրն էր, որ Բեռլինի Շարլոտենբուրգ պողոտայի Հարդենբերգ փողոցում Սողոմոն Թեհլերյանի գնդակից ջախջախվեց երիտթուրքական ոհմակի գլխավոր պարագլուխ, Մեծ Եղեռնի կազմակերպիչ՝ Թալեաթի գանգը:¹ Հայ վրիժառուի նպատակն իրագործված էր, գործողությունն՝ արդարացված: Իսկ այդ նպատակի ճանապարհին Թեհլերյանը մենակ չէր: Լինելով Շահան Նաթալիի «Նեմեսիս» խմբի անդամ, նրա զինակիցներն էին Հակոբ Զորյանը, Հրաչ Փափազյանը, Վահան Զաքարյանը, Լիպարիտ Նազարյանը, նույն խմբի անդամներ էին՝ Հայոց Եղեռնի մյուս կազմակերպիչներին զգեստնած Արշավիր Շիրակյանը,² Արամ Երկանյանը,³ Միսաք Թոռլաքյանը,⁴ Հակոբ Մերձանովը⁵ և այլք: Մերունդ, որ քաջ գիտակցեց Նաթալիի խոսքերի իսկությունը. «Ով որ ոչինչ ունի կորսրնցնելիք, ոչինչ ունի վախճալիք»:⁶ Քաջաբար, առանց վախի, գիտակցումով ու խղճի մեծ պատասխանատվությամբ՝ նրանք աներեր առաջ նետվեցին, հետապնդելով մեկ նպատակ՝ պատժել ոճրագործներին:

¹ Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը, Ե., 1990: *Առո՞ղ Համէլեն, ժամ Միշել Բրոն*, Վերականգնված հիշողություն, Ե., 1995, էջ 113-115:

² *Շիրակյան Ա.*, Կտակն էր նահատակներուն, Երևան, 1991:

³ *Երկանեան Ա.*, Ասպէս սպաննեցինք, Լոս-Անճէլէս, 1949:

⁴ *Եղիայան Վ., Արաբյան Ա.*, Միսաք Թոռլաքյանի դատավարությունը, Ե., 2008:

⁵ *Մերձանով Հ.*, Իմ կտակը, Պէյրոս, 1972:

⁶ *Շահան Նաթալի*, Թուրքերը և մենք, Ե., 1995: